

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 1251

20 Դեկտ. 1965

Ս. ԷՋՄԻԱՆԻՆ

Նորին Ամենապատուութիւն

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանիւն,

Պատրիարքին Հայոց Երուսաղէմի,

Երուսաղէմ, Յորդանան.

Սրբազան եղբայր.

Այսօր, երբ Հայոց Նաւիրական Սուրբ Էջմիածնէն վերստին կ'աւետուի մեր ազգին՝ Սուրբ Ծնունդը եւ Աստուածայայտութիւնը մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուսի Քրիստոսի, ՄԻՅՆՔ ջերմագին խնդութեամբ կուգանք բերելու Մեր եղբայրական սէրն ու ողջոյնը Ձերդ Ամենապատուութեան եւ Մեր օրհնութիւնը Ձեր ուխտապահ միաբանութեան եւ համայն հայ հաւատացեալ ժողովուրդին:

Այսօր, մեր սրտաբուխ մաղթանքն է նաեւ որ մարդիկ ու աշխարհի ժողովուրդները բոլոր. իրենց հոգիները դէպի երկինք բարձրացնեն ու տեսնեն փառքը Լոյսին, որ կ'իջնէ փրկութեան բարձունքներէն, որպէսզի մարդկութիւնը հասնի տեւական խաղաղութեան ու արդարութեան ափին, եւ երկրի վրայ կատարուի բարի կամքը մեր Աստուծոյն:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն»:

Այս մեծ աւետիսով կը մաղթենք նաեւ Ձեզի՝ արեւշատութիւն եւ Ձեր Աթոռին անսասան հաստատութիւն, Ձեր եկեղեցաշէն գործոց յաջողութիւն, ի հոգեւոր շինութիւն եւ ի միխթարութիւն Հայ հաւատացեալ մեր ժողովուրդին:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

Եղբայրական սիրով ի Քրիստոս,

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ